ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային հաշվողական սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/07» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«29» հուլիսի 2019թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արման Ղուկասյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ սնանկության դատարանի աշխատակազմի ղեկավար:

հանձնաժողովի անդամներ՝

Արևիկ Հարությունյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Էրեբունի նստավայրի պատասխանատու,

Կարեն Մելքոնյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար,

Լիլիթ Հովհաննիսյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի քարտուղար՝

Օֆելյա Ասատրյան՝ (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/ՄԻՄ) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ:

Բացակայում էր՝

Արմինե Ալիխանյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Շենգավիթ նստավայրի պատասխանատու,

Տեղեկատվություն՝ հայտերի գնահատման արդյունքների հաստատման վերաբերյալ.

Ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետով սահմանված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը՝ հանձնաժողովը որոշեց **«Ստարտկոպի» ՍՊԸ**-ի, **«Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ի** և **«ՍԵԳ» ՍՊԸ**-ի մասնակցության իրավունքը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող անձնաժողովը որոշեց՝

1. հաստատել հայտերի գնահատման արդյունքները և

-1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 7-րդ և 10-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից հայտարարել **«Ստարտկոպի» ՍՊԸ** -ին,

-11-րդ և 12-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից հայտարարել **«Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ**-ին:

-13-րդ, 14-րդ և 15-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից հայտարարել **«ՍԵԳ» ՍՊԸ**-ին:

2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է),

3. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագրեր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
նիստը նախագահ՝ Արման Ղուկասյան

Անդամներ՝

Կարեն Մելքոնյան

Արևիկ Հարությունյան

Լիլիթ Հովհաննիսյան

Քարտուղար՝ Օֆելյա Ասատրյան